բերած ըլլան, և Յունաստանէն՝ Եւրոպիոյ ազնուականաց բուրաստաններու մէջ թափառած ըլլայ և փասիս գետին ընկեր ըլլալով՝ անոր կոչուած է փասիան։

Ըստ ոմանց խորենացւոյ Հաւ դեղձուկ անուամբ յիշատակած թռչունն կը դաշակուի փասիանն ըլլալ։

Կը թողումք արդ հաւազգի թռչունները, կ'անցնիմք սակաւ ինչ ուշադրութիւննիս դարձընելու հայրենեաց ամենէն սիրելի բարձրաօրուն թռչնոց վրայ։

Ցուտ մը Արօսն մէջ տեղ կը նստուի, իր որորիկ ձայնով զիս ղխտեցէք կ'ըսէ։

Արօս. այս թռչունը չունի այն գեղեցիկ ոսկեփետուր պատմուճանը որով, զարդարուած են վերյիշեալ փասխ հաւերն. մելամաղձիկ է նորա տեսքն, բնութիւնը վայրագ։ Սիրած է սա մեր երկրի ամէն գաւառները և աւելի կ'ախորժի բնակիլ ի կարին, Մուշ, Սեբաստիա, Տիգրանակերտ, Վան, յԱրցախ, բայց ըստ Շանթրի՝ եւրոպացի հետաքըքիր ճանապարհորդին՝ ամենաշատ է կողբայ կողմերը։

Ըստ զանազան գաւառաց՝ հայրենակիցք զԱրօս մերթ կը կոչեն Որորիկ, վասն զի թռչելու ժամանակ իւր անուան նման շառաչ կը հանէ, իրարու բախելով գեղնորակ խարտեաշ թեւերը. մերթ Արօս կը կոչուի, վասն զի միշտ արօս կոչուած մօլախոտից մէջ կը կենայ։

Շարայարելի

## ՄԱՅՐՆ ԻՄ

1. Ո՞ ի քընքուշ իւրոց կըրծոց ինձ ջամբեաց,
Եւ տայր հանգչիլ ինձ ի վերայ իւր բազկաց,
Ստէպ համբուրիւ գըգուեալ ի մէջ իւր գըրկաց.
Մայրն իմ։

2. Երբ յաչացըս անուշարար քուն մեկնէր,
Ո՞ էր նա որ օրօրոց երգ ինձ երգէր,
Եւ զըգուանօք պահել զիս լուռ աշխատէր.
Մայրն իմ։

3. Երբ ննջէի յանկողնի իմ մանկութեան,
Ո՞ նստէր և հըսկէր գըլխոյս մանկական,
Ցորոյ աչաց թորէր արտօսր սիրական,
Մայրն իմ։

4. Երբ խօթութիւն կամ ցաւ տայր ինձ լինել լաց,
Ո՞վ մունջ յառեալ կայր ծանրացեալ իմ աչաց,
Եւ լայր թէ մի՛ գուցէ զրաւիմ ի կենաց.
Մայրն իմ։

5. Ո՞ ցանկայր զիս զուարթ 'ւ ուրախ տեսանել,
Եւ զուարճանայր ցանգ ինձ խաղալ ցուցանել,
Եւ միտ դընէր երբ ունէի ինչ ասել.
Մայրն իմ։

6. Ցանկանելն իմ ո՞ վազէր ինձ յօգնութիւն,
Եւ պատմէր ինձ ախորժական պատմութիւն,
Կամ համբուրիւ ցաւոցըս տայր դիւրութիւն.
Մայրն իմ։

7. Ո՞ աղօթել շըրթանցս ուսոյց մանկական,
Եւ զԱստուծոյ պաշտել սուրբ օր և զմատեան,
Եւ եցոյց ինձ զախորժ շաւիղ գիտութեան.
Մայրն իմ։

8. Ի պարտուցըս երբէք մա՞րթ է ինձ շեղիլ՝
Սիրալիր և գըթած առ քեզ չըլինել,
Առ քեզ՝ որում քաղցր էր այդչափ զիս սիրել.
Մայրդ իմ։

9. Ա՜հ ո՛չ. խորհել այդպիսի բան չըկարեմ,
Եւ թէ Աստուած խնայէ յիս որ ծեր ապրիմ՝
Փոխարինել քո խընամոց յոյս ունիմ,
Մայրդ իմ։

10. Երբ աւուրք քո ծաղկեալ ալեօք հընանան
Տըկար մարմնոյդ բազուկս առողջ յենարան
Լիցի, ու զցաւ քո մեղմել եմ պարտական,
Մայրդ իմ։

11. Եւ երբ ըզքեզ տեսից գըլուխ վայր կախել,
Առ քեզ կացեալ իմ է յայնժամ կարգ հըսկել,
Եւ ի տես քո զորովաբար արտասուել.
Մայրդ իմ։

12. Զի Աստուծոյ, որ ի յերկինս բնականայ,
Ցասուցեալ աչք վրէժխընդրութեամբ ցոլանայ,
Եթէ երբէք զքեզ անարգել իմ վըստահ,
Մայրդ իմ։

Սուրապայա — Թարգմ. յանգլիականէ

Մայիս, 1897 — Յ. ՏԷՐ Կ. ՅՈՐԴԱՆԱՆԵԱՆ